# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 սեպտեմբերի 2010 թվականի N 1179 - Ա

## ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 10-ի N 759-Ն որոշման N 8 հավելվածով նախատեսված զուգարանների ձեռքբերման գործընթացի իրականացումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 10-ի N 759-Ն որոշման N 8 հավելվածով նախատեսված զուգարանների ձեռքբերման գործընթացն իրականացնել «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) միջոցով:

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 10-ի N 759-Ն որոշման N 8 հավելվածով նախատեսված զուգարանների ձեռքբերման նպատակով հիմնադրամի հետ կնքել պայմանագիր.

2) առաջարկել Երևանի քաղաքապետին Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության օգտագործման իրավունքով հատկացնել տարածք՝ երկու զուգարանի

 2

տեղադրման համար՝ հետագայում օգտագործման իրավունքը երրորդ կողմին փոխանցելու իրավասությամբ.

3) հիմնադրամի միջոցով ապահովել՝

ա. զուգարանների հետագա շահագործման նպատակով մասնավոր ընկերության ընտրությունը՝ մրցութային կարգով,

բ. զուգարանների շահագործումը՝ մինչև մասնավոր ընկերության ընտրությունը,

գ. զուգարանների ձեռքբերումից հետո ֆինանսական միջոցների տնտեսում լինելու դեպքում որևէ զբոսաշրջային վայրում մեկ զուգարանի կառուցումը՝ նախապես համաձայնեցնելով շահագրգիռ գերատեսչությունների հետ.

4) զուգարանները տրամադրել և դրանց նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցել ընտրված մասնավոր ընկերությանը՝ իրականացված ծախսերի՝ տարաժամկետ փոխհատուցման պայմանով՝ սահմանված ժամանակացույցին համապատասխան.

5) ապահովել տարաժամկետ փոխհատուցման գումարների հավաքագրումը և մուտքագրումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2010 թ. սեպտեմբերի 15
Երևան



Հայաստանի
փոքր և միջին ձեռնարկատիրության
զարգացման ազգային կենտրոն

Small & medium entrepreneurship development
national center of Armenia

№ 1C/287-10
«28» 10 2010թ.

ՀՀ էկոնոմիկայի նախարարության
աշխատակազմի ղեկավար
պրն Է. Տարայանին

Հարգելի պարոն Տարայան,

Ի պատասխան Ձեր՝ 07/20.2/5278-10 առ 27.10.2010թ. գրության՝ սույնով հավաստում ենք, որ <<Փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն>> հիմնադրամն.

1. ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ,
2. դատական կարգով անվճարունակ չի ճանաչվել, լուծարման գործընթացում չի գտնվում, պայմանագրի կատարման համար անհրաժեշտ գույքն արգելանքի տակ չի գտնվում,
3. կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտ ներկայացնելու պահին նախորդող 3 տարիների ընթացքում.

ա) դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար,

բ) գնման պայմանագիր կնքելու նպատակով չի ներկայացրել կեղծ տվյալներ,

գ) իր գործողությամբ կամ անգործությամբ չի խախտել գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

<<Փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն>> հիմնադրամն հայտնում է իր համաձայնությունը Ձեր վերոհիշյալ գրության մեջ զուգարանների ձեռք բերումն իրականացնել 100 000 000 (հարյուր միլիոն) ՀՀ դրամով:

Հարգանքով՝

Գործադիր տնօրենի ժ/պ Կարեն Գևորգյան

Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Մ.Մկրտչյան 5 Հեռ.՝ (374 10) 541648, 563714 Ֆաքս՝ (374 10) 541642, Էլ.փոստ՝ info@smednc.am
5 M.Mkrtchyan St., 0010 Yerevan, Republic of Armenia Tel: (374 10) 541648, 563714 Fax: (374 10) 541642, E-mail: info@smednc.am
www.smednc.am

# ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՄԱ/11

ք. Երևան «28» հոկտեմբերի 2010թ.

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Է. Տարասյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Հայաստանի փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամն, ի դեմս գործադիր տնօրենի ժ/պ Կ. Գևորգյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, (Պատվիրատուին և Կատարողին միասին հիշատակման դեպքում, այսուհետ՝ «Կողմեր») կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը պարտավորվում է ձեռք բերել չօգտագործված ապրանքը (այսուհետ՝ Ապրանք) սույն պայմանագրի անբաժանելի մաս համարվող Հավելված 1-ով սահմանված պայմաններին և ժամկետներին համապատասխան: Կատարողը պարտավորվում է Ապրանքը Պատվիրատուին հանձնել իր հետ կոմպլեկտում եղած բոլոր պարագաներով և փաստաթղթերով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից ձեռքբերման ընթացքը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կատարողի կողմից ձեռքբերված Ապրանքը չի համապատասխանում սույն պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջներին և (կամ) խախտել է ձեռքբերման ժամկետը:

2.1.3 Չընդունել Ապրանքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.4 Մինչև Հավելված 1-ի 1-ին կետի կատարումը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ այդ մասին առնվազն 5 օր առաջ տեղեկացնելով Կատարողին և հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Ստուգել տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխանությունը և ընդունել Ապրանքը, իսկ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Կատարողի կողմից Հավելված 1-ի 1-ին կետով նկարագրված զուգարանները ձեռքբերելուց հետո ապահովել Հավելված 1-ի 4-րդ կետում նախատեսված տարածքի տրամադրումը հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Մինչև Ապրանքի ձեռքբերումը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 5 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:

2.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի Հավելված 1-ով սահմանված պայմաններով ապահովել Ապրանքի ձեռքբերումը՝ ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.3 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը:

2.4.4 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.5 Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ամբողջ ծավալով ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում, վերացնել թերությունները:

## 3. ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3.1 Ապրանքի ձեռքբերման աշխատանքները իրականացվում է սույն պայմանագրի Հավելված 1-

ով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան:

## 4. ՉԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարողը Ապրանքի ձեռքբերման աշխատանքների ավարտից 20 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում կատարված աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

4.2 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.3 Կատարողի իրականացված աշխատանքի արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

4.4 Պատվիրատուի կողմից կատարված աշխատանքը ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը պարտավորվում է կատարել ծախսերի վերահաշվարկ և ներկայացնել Պատվիրատուին: Դրական տարբերության դեպքում մնացած գումարը Կատարողը 10 աշխատանքային օրվա ընթացքում պարտավորվում է փոխանցել Պատվիրատուի հաշվեհամարին:

## 5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

5.1. Սույն պայմանագրով Ապրանքի գինը կազմում է 100 000 000 (մեկ հարյուր միլիոն) ՀՀ դրամ: Սույն կետով սահմանված գումարը ներառում է՝ ապրանքի գինը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը, և պարտադիր այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող այլ ծախսերը:

5.2 Պատվիրատուն Ապրանքի ձեռքբերման աշխատանքների դիմաց Կատարողին վճարում է կանխավճար 5.1 կետով սահմանված գումարի 100%-ի չափով սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N2 սահմանված վճարման ժամանակացույցին համապատասխան, անկանխիկ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, պայմանագիրը կնքելուց հետո՝ 10 բանկային օրվա ընթացքում:

5.3 Սույն պայմանագրի 2.1.2, 2.3.1 և 8.2 կետերով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում Կատարողը Պատվիրատուին է վերադարձնում կանխավճարի գումարը ամբողջությամբ:

5.4 Եթե սույն պայմանագրի գնի հիմնավորվածության և արժանահավատության փորձաքննության արդյունքում պայմանագրի գինը որակվում է շուկայական գնից տասը տոկոս բարձր, և Կատարողը չի համաձայնում այդ չափով գնի նվազեցմանը, ապա Պատվիրատուն պայմանագիրը միակողմանիորեն լուծում է և չի կրում պայմանագրի լուծման հետևանքով առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ապրանքի ձեռքբերման որակի և սույն պայմանագրի Հավելվածով 1-ով նախատեսված պահանջների պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման, 2.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Ապրանքի ձեռքբերման և տեղադրման աշխատանքների արդյունքը չընդունվելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,05 %-ի չափով:

6.3 Սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի ձեռքբերման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ Ապրանքի գնի 0,05 %-ի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հետ են հաշվանցվում Ապրանքի համար Կատարողին վճարման ենթակա գումարներից:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.8 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Պատվիրատուի կրած վնասները, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում մինչև մեկ տարի ժամկետով:

8.2 Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սույն պայմանագրով նախատեսված գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

8.3 Սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի ձեռքբերման աշխատանքների ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը՝ սույն պայմանագրի կողմերից որևէ մեկի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝

ա/ Պատվիրատուի մոտ չի վերացել Ապրանքի օգտագործման պահանջը.

բ/ եթե դա Պատվիրատուի գործողության կամ անգործության հետևանք չէ:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.6 Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի Հավելված 1-ը համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| **Պատվիրատու** | **Կատարող** |
|---|---|
| ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ |
| ք. Երևան Մ. Մկրտչյան 5 | ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 |
| ՀՀ 900011010478 | ՀՀ1810052010233313 |
| ՀՀ Ֆինանսների նախարարության | Զարգացման Հայկական Բանկ |
| աշխատակազմի գործառնական վարչություն | ՀՎՀՀ02562459 |
| ՀՎՀՀ 02505983 | |
| *Աշխատակազմի ղեկավար* | Գործադիր տնօրեն |
| Է. Տարասյան | |

ՓՄՁ ԶԱԿ
НЦР МСП АРМЕНИИ
SME DNC OF ARMENIA
02562459

22.10.10թ

22.10.10թ

26.10.10

Հավելված N 1

28 հոկտեմբերի 2010թ.կնքված

ապրանքների ձեռքբերման պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ- ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| ՀՀ | Ձեռքբերման համառոտ նկարագիրը | Չափման միավորը | Քանակը | որակավորման և այլ բնութագրիչ հատկանիշները | Ձեռքբերման ժամկետ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ստացիոնար հասարակական զուգարան | հատ | 2 | Յուրաքանչյուրը ունի `<br>-Երկու խցիկ, որոնցից մեկը հարմարեցված լինի նաև մարդկանց սակավաշարժուն խմբերի համար,<br>- Ավտոմատ առանձնահատկությունները; ստանդարտ` սենսորային օճառաման, ջրի ծորակ, զուգարանի պարզաջրում; ինքնամաքրվող զուգարանակոնք, ինքնալվացվող հատակ<br>- Արտաքին պատերի ծածկը հակավանդալային նյութերից և ջերմամեկուսացված<br>- Չժանգոտող պողպատից և ավտոմատ սահող խցիկների դռներ` /սլայդ/<br>- Հարթ տանիք,<br>- Ներքին հարդարումը և սարքավորումները` հակավանդալային, չժանգոտվող պողպատից<br>- Ջեռուցում և օդափոխություն<br>- Առանձին ծառայողական սենյակ նախատեսված սպառողական նյութերի, խոցելի սարքերի և այլնի պահպանության համար) | - |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | - Էլեկտրական կողպեք մանրադրամների արկղիկ<br>- Բանկոմատի կամ ջրերի /հյութերի/, ծխախոտի վաճառքի ավտոմատ մեքենաների համար հատկացված տարածք<br>-գովազդային վահանակներ | |
| 2 | Ստացիոնար զուգարանների տեղափոխում մինչև Երևան | - | 2 | - | - |
| 3 | Ստացիոնար զուգարանների մաքսազերծում | - | 2 | - | - |
| 4 | Ստացիոնար զուգարանների տեղադրում նախապես ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից գրությամբ ներկայացրած հասցեում | - | 2 | Ստացիոնար ամրացված է հատակին և միացված կոյուղու և ջրամատակարարման համակարգին | 01.05.2011թ. |

**Պատվիրատու**

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
ք. Երևան Մ. Մկրտչյան 5
ՀՀ 900011010478
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02505983

*Աշխատակազմի ղեկավար*
Է. Տարասյան

**Կատարող**

Հայաստանի ՓՄԾ ՁԱԿ
ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
ՀՀ1810052010233313
Զարգացման Հայկական Բանկ
ՀՎՀՀ02562459

*Գործադիր տնօրեն* [illegible]

Հավելված N 2
28 հոկտեմբերի 2010թ.կնքած
ապրանքների ձեռքբերման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| N | Ապրանքի անվանումը | Տնտ. դասակար գում | Նախատեսվում է ֆինանսավորել 2010թ. արտաբյուջետային բյուջեից | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | I եռամսյակ | | | II եռամսյակ | | | III եռամսյակ | | | IV եռամսյակ | | | |
| | | | Հունվար | Փետրվ ար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստո ս | Սեպտեմբե ր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդ ամենը |
| 1 | Ջուգարան | 5122 | | | | | | | | | | | 100% | 100% | 100 % |

**Պատվիրատու**
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
ք. Երևան Մ. Մկրտչյան 5
ՀՀ 900011010478
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02505983

*Աշխատակազմի ղեկավար*
Է. Տարասյան

**Կատարող**
Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ
ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
ՀՀ1810052010233313
Զարգացման Հայկական Բանկ
ՀՎՀՀ02562459

*Գործադիր տնօրեն*
Կ. [illegible]

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԿՆՔՎԱԾ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

/Հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն/

2010 թվականի հոկտեմբերի 28-ին պատվիրատու՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, որը գտնվում է ք.Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեում և կատարող՝ «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը, որը գտնվում է ք.Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեում, միջև կնքվել է գնման պայմանագիր /այսուհետ՝ «Պայմանագիր»/:

Գնման առարկա է հանդիսանում ստացիոնար հասարակական զուգարանները:

Պայմանագրի գինը կազմում է 100.000.000 ՀՀ դրամ:

Գնումները կատարվում են ստացիոնար զուգարանների ձեռքբերման նպատակով:

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ մեկ անձից գնումներ կատարելու ձևով:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության
աշխատակազմի ղեկավար

Է. Տարասյան

Կ.Տ.

Հաստատում եմ
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
աշխատակազմի ղեկավար Է. Տարայան
(Պատվիրատուի ղեկավարի անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

«25» 10 2010թ. Կ.Տ

# ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ
# ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Հիմնական տեղեկություններ գնման մասին

1.1. Պատվիրատուի

Անվանումը ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Հասցեն Մ. Մկրտչյան 5

1.2. Գնման առարկայի տեսակը

ապրանք աշխատանք ●ծառայություն

1.3 Կարիքի բավարարման միջոցը

գնում ■ վարձակալություն ☐ լիզինգ ☐

1.4. Գնման առարկայի համառոտ նկարագիրը. *Ստացիոնար հասարակական զուգարանի ձեռքբերում:*

1.5. Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձի

Անվանումը (անունը, ազգանունը) «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ

Հասցեն *ք. Երևան, Մ. Մկրտչյան 5*

Հեռախոսը /աշխ/ 54-16-48 Ֆաքսը ______ էլ. փոստի հասցեն

1.6. Կնքված գնման պայմանագրի (կցվում է)

Ծածկագիրը N ՍԱ/11 գնման պայմանագիր

Կնքման ամսաթիվը *28.10.2010թ*
Գործողության ժամկետը *գործում է մինչև կողմերի պարտավորությունների լրիվ ծավալով կատարումը*
Գինը *100.000.000 (ՀՀ դրամ)*

1.7. Գնումների պաշտոնական տեղեկագրում կնքված պայմանագրի մասին տեղեկատվություն հրապարակելու նպատակով պատվիրատուն լիազոր մարմնին ներկայացրե՞լ է պահանջվող տեղեկատվության տեքստը

Այո ■

2. Գնման գործընթացի նախապատրաստումը



*Արձանագրության վարման պատասխանատուի ստորագրությունը* ______

2.1. Գնման պահանջի ծագման

Իրավական հիմքը <u>ՀՀ կառավարության 9 սեպտեմբերի 2010թ N1179-Ա</u>

Օրը՝ ամսաթիվը ______10.09.2010թ.______

2.2. Պատվիրատուի ղեկավարը սահմանել է՝

Պատասխանատու անձ ■

Անունը <u>Հովսեփյան Էլեն</u>
Իրավասությունը վերապահելու հիմքը

Հեռախոսը /աշխ/ Ֆաքսը <u>526055</u> էլ. փոստի հասցեն ______

2.3. Մեկ անձից գնման ձևի կիրառման պայմանն ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի համապատասխան կետի՝

■ գնման ենթակա ապրանքները, աշխատանքները, ծառայությունները հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային իրավունքով, մրցակցության բացակայությամբ, համապատասխան լիցենզիայի առկայությամբ.

□ արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և գնման այլ ձևի կիրառումը՝ ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել, ինչպես նաև եթե գնման առարկան ներառված չէ պարբերական մրցույթով կնքված պայմանագրերում.

□ պատվիրատուն որևէ անձից կատարելով գնում, որոշում է լրացուցիչ գնում կատարել նույն անձից, պայմանով, որ դրա գինը չգերազանցի սկզբնական գնման պայմանագրի գնի 20 տոկոսը: Միևնույն անձից սույն կետի կիրառմամբ լրացուցիչ գնում կարող է կատարվել միայն մեկ անգամ:

2.4. Մեկ անձից գնման ձևի կիրառման ընտրված պայմանի հիմնավորումը

<u>*ՀՀ կառավարության 2010թ. սեպտեմբերի 9-ի «Ապրանքների ձեռ բերման գործընթացն իրականացնելու մասին» N 1179-Ա որոշման 1-ին կետով սահմանվել է, որ ապրանքը պետք է ձեռքբերել «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի միջոցով (մրցակցության բացակայություն):*</u>

<u>*Միաժամանակ հավաստում ենք, որ գնման ընթացակարգի արձանագրության ուշ ներկայացումը չի հանգեցրել գնման ընթացակարգի կամ դրա արդյունքների փոփոխմանը, ինչպես նաև գնման գործընթացի մասնակիցների շահերի ոտնահարմանը:*</u>

3. Գնման պայմանագրի կնքումը

3.1. Գնման պայմանագիրը կնքելու նպատակով պատվիրատուի առաջարկը ներկայացնելու միջոցը՝

■ Մեկ անձին պայմանագիր կնքելու առաջարկի ներկայացում

3.2. Տեղեկություններ այն անձանց (անձի) մասին որոնց ուղարկվել է պատվիրատուի առաջարկը.

| N | Անվանումը (անուն, ազգանունը) | Հասցեն | Ներկայացված առաջարկի հիմքը՝ գրության համարը և ամսաթիվը (պատճենը կցվում է) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | «Հայաստանի փոքր և | ք. Երևան, Մ. Մտրտչյան | N 07/20.2/5278-10 27.10.2010թ. |



*Արձանագրության վարման պատասխանատուի ստորագրությունը* ______

| | | | |
|---|---|---|---|
| | միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ | 5 | |
| | | | |

3.3. Տեղեկություններ պատվիրատուի առաջարկը ընդունած անձանց վերաբերյալ.

| N | Անվանումը (անուն, ազգանունը) | Հասցեն | Առաջարկը ընդունելու հիմքը՝ գրության համարը և ամսաթիվը (պատճենը կցվում է) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ | ք. Երևան, Մ. Մտրտչյան 5 | N10/287-10 28.10.2010թ. |
| | | | |

3.4. Տեղեկություններ պատվիրատուի կողմից մերժված առաջարկությունների վերաբերյալ.

Մերժե՞լ է Պատվիրատուն որևէ առաջարկ՝ այն պայմանագրի կնքման նպատակով մասնակցին ուղարկված գրությամբ սահմանված կարգի խախտմամբ ներկայացված լինելու պատճառով.

Այո ☐ Ոչ ■

Եթե այո, ապա նշել՝

| Առաջարկը ներակայացրած անձի անվանումը (անուն, ազգանունը) | Մերժման հիմքը | Մերժման մասին ծանուցելու ամսաթիվը (գրության պատճենը կցվում է) |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |

Մերժե՞լ է պատվիրատուն որևէ առաջարկ այն պատճառով, որ առաջարկը ներկայացրած մասնակիցը սահմանված կարգով չի հավաստել գնումներին մասնակցության իր իրավունքը.

Այո ☐ Ոչ ■

Եթե այո, ապա նշել՝

| Առաջարկը ներակայացրած անձի անվանումը (անուն, ազգանունը) | Մերժման հիմքը | Մերժման մասին ծանուցելու ամսաթիվը (գրության պատճենը կցվում է) |
|---|---|---|
| | | |
| | | |

Մերժե՞լ է պատվիրատուն որևէ առաջարկ այն պատճառով, որ առաջարկը ներկայացրած մասնակիցը սահմանված կարգով չի հավաստել որակավորման իր տվյալները

Այո ☐ Ոչ ■

Եթե այո, ապա նշել՝

| Առաջարկը ներակայացրած անձի անվանումը (անուն, ազգանունը) | Մերժման հիմքը | Մերժման մասին ծանուցելու ամսաթիվը (գրության պատճենը կցվում է) |
|---|---|---|
| | | |
| | | |



*Արձանագրության վարման պատասխանատուի ստորագրությունը* ____________

3.5. Բանակցություններ

Պատվիրատուն վարե՞լ է բանակցություններ

Այո ☐ Ոչ ■

Եթե այո, ապա նշել՝

Պատվիրատուին ներկայացնող անձի (անձանց)

**Անուն, ազգանունը** ____________________
**Պաշտոնը** ____________________
**Հեռախոսը /աշխ/** ____________ **Ֆաքսը** ____________ **էլ. փոստի հասցեն** ____________

Մասնակցին ներկայացնող անձի (անձանց)

**Անուն, ազգանունը** ____________________
**Պաշտոնը** ____________________
**Հեռախոսը /աշխ/** ____________ **Ֆաքսը** ____________ **էլ. փոստի հասցեն** ____________

Բանակցությունների արդյունքների համառոտ նկարագիրը ____________

## 4. Կասեցում

Կասեցրե՞լ է պատվիրատուն գնման գործընթացը.

**Այո** ☐ Ոչ ■

Եթե այո, ապա նշել՝

**Կասեցման հիմքը՝ պատճառը** ____________________
**Կասեցման ժամկետը** ____________________

## 5. Բողոքարկում

Ստացե՞լ է պատվիրատուն գնման գործընթացի հետ կապված որևէ բողոք.

Այո ☐ Ոչ ■

Եթե այո, ապա նշել՝

| Բողոքը ներկայցրած անձի անվանումը (անուն, ազգանունը) | Բողոքի համառոտ նկարագիրը | Բողոքը ներկայացնելու ամսաթիվը **(գրության պատճենը կցվում է)** |
|---|---|---|
| | | |

Ընդունե՞լ է պատվիրատուն որոշում բողոքի կապակցությամբ.

Այո ☐ Ոչ ■

Եթե այո, ապա նշել՝

| Որոշման համառոտ բովանդակությունը | Նման որոշում կայացնելու իրավասության հիմքը | Բողոքը ներկայացրած անձին որոշումը տրամադրելու ամսաթիվը **(գրության պատճենը կցվում է)** |
|---|---|---|
| | | |

Եթե ոչ, ապա նշել՝

| Որոշում չկայացնելու պատճառը | Բողոքը ներկայացրած անձին ծանուցելու ամսաթիվը **(գրության** |
|---|---|



*Արձանագրության վարման պատասխանատուի ստորագրությունը* ____________________

| | պատճենը կցվում է) |
|---|---|
| 1 | 2 |
| | |

Բողոքարկվե՞լ են պատվիրատուի գործողությունները լիազոր մարմնին.

Այո ☐ Ոչ ■

Եթե այո, ապա նշել՝

| Բողոքը ներկայացրած անձի անվանումը (անուն, ազգանունը) | Բողոքի համառոտ նկարագիրը | Բողոքի մասին պատվիրատուին ծանուցելու ամսաթիվը (Լիազոր մարմնի գրության պատճենը կցվում է) |
|---|---|---|
| | | |

Ընդունե՞լ է լիազոր մարմինը որոշում ներկայացված բողոքի կապակցությամբ.

Այո ☐ Ոչ ■

Եթե այո, ապա նշել՝

| Որոշման համառոտ բովանդակությունը | Լիազոր մարմնի որոշումը ստանալու ամսաթիվը (Լիազոր մարմնի գրության պատճենը կցվում է) |
|---|---|
| | |

**6. Գնման ընթացակարգի արձանագրության վարման պատասխանատու անձի**

**Անուն, ազգանունը** Էլեն Հովսեփյան

Պաշտոնը Կազմակերպատնտեսական վարչության առաջին կարգի մասնագետ

Հեռախոսը /աշխ/ 526055 Ֆաքսը__Էլ. փոստի հասցեն

*Արձանագրության վարման պատասխանատուի ստորագրությունը* ____________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 56-61-85. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№ 07/20.2/5278-10
«27» 10 2010 թ

Ձեր №

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՊԱՐՈՆ Կ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գևորգյան,

Հայտնում ենք Ձեզ, որ անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու 2 հատ զուգարան:

Գնումները ֆինանսավորվելու են 2010 թվականի արտաբյուջետային միջոցների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Գնման գործընթացին մասնակցելու համար պատվիրատուին պետք է ներկայացվի հաստատված և ստորագրված հայտարարություն այն մասին, որ «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը.

1) ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.

2) դատական կարգով անվճարունակ չի ճանաչվել, լուծարման գործընթացում չի գտնվում, արգելանքի տակ չունի պայմանագրի կատարման համար հայտով ներկայացված գույք.

3) կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում.

Կատարող՝ Էլեն Հովսեփյան
526055

ա/ դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

բ/ գնման պայմանագիր կնքելու նպատակով չի ներկայացրել կեղծ տվյալներ,

գ/ իր գործողությամբ կամ անգործությամբ չի խախտել գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ձեր կողմից ներկայացվող հայտը պետք է ներառի նաև Ձեր կողմից հաստատված և ստորագրված պայմանագրի գնի ինքնարժեքի հաշվարկը, իսկ շահույթը չի կարող գերազանցել պայմանագրի գնի տասը տոկոսը:

Համաձայնության դեպքում խնդրում ենք ներկայացնել սույն գրության մեջ նշված հայտարարությունը, գնային առաջարկը և պայմանագրի գնի ինքնարժեքի հաշվարկը:

Կից ներկայացնում ենք հիշյալ ծառայությունների գնման պայմանագրի նախագիծը:

Առդիր՝ 6 էջ:

Հարգանքով՝

ԷՄԻԼ ՏԱՐԱՍՅԱՆ